

ԿԱՐԾԻՔ

ՆԵԼԼԻ ԳԵՎՈՐԳԻ ԺԱՄԿՈՅԱՆԻ

**«ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԵԿԵՂԵՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1166-1226 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ
Թ.00.05 «ԿՐՈՆԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (ՊԱՏՄԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայոց պատմության տարբեր շրջափուլերում Հայոց աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների ուսումնասիրությունները մեծապես կարևորվում են մի կողմից պատմական իրադարձությունների վերհանման և լուսաբանման, իսկ մյուս կողմից՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների բնույթի, նրանց փոխկապակցվածության և տարանջատության ներերկայացման, պետության ներսում եկեղեցու դերակատարության բացահայտման տեսանկյունից:

Նշված առումներով խիստ կարևորված են Հայոց պատմության միջնադարյան շրջանում աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերությունների ուսումնասիրությունները, ուստի ողջունելի է Ն. Ժամկոչյանի «Պետություն-եկեղեցի հարաբերությունները Կիլիկյան Հայաստանում 1166-1226 թվականներին» թեմայով ատենախոսության ի հայտ գալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ հեղինակը հստակորեն ներկայացնում է թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, ուսումնասիրվածության աստիճանը, հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, հիմնավորում ընտրված ժամանակագրական շրջանակը, վերլուծում թեմային առնչվող սկզբնաղբյուրային և վերլուծական գրականությունը:

Ատենախոսության առաջին գլխում («Հռոմկլայի կաթողիկոսարանը և Կիլիկիայի Հայոց պետությունը 1166-1187 թթ.») հեղինակն անդրադարձել է Ներսես Շնորհալու հայրապետությանը, պետություն-եկեղեցի հարաբերություններին 1169-1173 թթ., հայաստրական եկեղեցաքաղաքական հարաբերություններին, 1173 թ. կաթողիկոսի ընտրությանը արքունիքի միջամտությանը, Գրիգոր Տղայի և Գրիգոր Ասիրատի միջև զահակալական պայքարին և Ռուբեն Գ-ի օրոք պետություն-եկեղեցի հարաբերությունների բնույթին ու բովանդակությանը: Նշված խնդիրներից յուրաքանչյուրին հեղինակը հատկացրել է առանձին ենթավերնագիր՝ խորությամբ քննելու նպատակադրումով:

Հատկապես շահեկան են առաջին գլխի երրորդ («Կիլիկիայի հայկական պետության և Հռոմկլայի կաթողիկոսարանի հարաբերությունները 1169-1173 թթ.») և հինգերորդ («1173 թվականին Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունը և Կիլիկիայի հայոց պետության միջամտությունը») ենթագլուխներում ներկայացվածը, քանի որ դրանցում հանգամանորեն լուսաբանված է հայոց աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները նշված ժամանակահատվածում և աշխարհիկ իշխանության միջամտությունը կաթողիկոսի ընտրությանը, որը միջնադարում հաճախ հանդիպող իրողություն էր:

Ատենախոսության երկրորդ գլխում («Պետության և եկեղեցու փոխհարաբերությունները Լևոն Բ-ի օրոք (1187-1198 թվականներ)») հեղինակը քննության է առել Լևոն Բ-ի՝ եկեղեցու նկատմամբ վարած քաղաքականությունը Գրիգոր Տղա կաթողիկոսի օրոք, աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների սրումը Գրիգոր Ե Քարավեժ կաթողիկոսի գահակալման շրջանում, հոգևոր դասի դերը Կիլիկիայում հայկական թագավորության հռչակման մեջ և Լևոն Մեծագործի մոտեցումը եկեղեցական նորամուծությունների հարցին:

Ատենախոսության երրորդ գլխիւր («Պետության և եկեղեցու հարաբերությունները Լևոն Մեծագործի թագավորության շրջանում (1198-1219 թթ.)») մանրակրկիտ տեղեկություններ է պարունակում թագավորության սկզբնական շրջանում Կիլիկյան Հայաստանում պետության և եկեղեցու հարաբերությունների մասին: Հեղինակը մասնավորապես անդրադարձել է աշխարհիկ և հոգևոր իշխանությունների համագործակցությանը Կիլիկյան Հայաստանում, Հայոց կաթողիկոսության և այլ եկեղեցիների հարաբերություններին, 1203 թ. կաթողիկոսական ընտրությանը քաղաքական պայքարին:

Ատենախոսության չորրորդ գլխում («Կիլիկիայի Հայոց գահի համար պայքարը և Հայոց եկեղեցին (1219-1226 թվականներ)») հեղինակն առանձնաբար ներկայացրել է Լևոն Բ-ի մահից հետո Կիլիկյան Հայաստանում տիրող իրավիճակը և եկեղեցու դերակատարությունը, խնամակալների կառավարման շրջանում տիրող իրավիճակը խնդրո առարկա հարաբերություններում, այս ժամանակահատվածում աշխարհիկ իշխանության միջամտությունը կաթողիկոսական ընտրություններին և Հայոց եկեղեցու դիրքավորումը Կիլիկյան Հայաստանում Հեթումյան հարստության հաստատման հարցում:

Այնուհետև հեղինակը ներկայացնում է իր եզրակացությունները՝ փորձելով հնարավորինս հիմնավոր ներկայացնել հետազոտության արդյունքները: Ն. Ժամկոչյանի եզրակացությունները բխում են հեղինակային վերլուծությունից, հիմնավորված են և ընդունելի:

Անհրաժեշտ է նշել, որ ատենախոսության՝ հեղինակի օգտագործած աղբյուրային հենքը լիովին բավարար է արդյունավետ և բովանդակային վերլուծություն կատարելու համար:

Հեղինակն ըստ անհրաժեշտության անդրադարձել է նաև տարբեր հետազոտողների տեսակետներին, քննարկել դրանք՝ տեքստը օժտելով բոլոր անհրաժեշտ հղումներով:

Ատենախոսության մեջ հեղինակի կատարած քննությունն ու արտահայտած կարծիքները հիմնավոր են և օբյեկտիվ: Ն. Ժամկոչյանը հանդես է բերել աղբյուրային և վերլուծական գրականության հետ աշխատելու հմտություններ, գիտական աշխատանք կատարելու էական ընդունակություններ, խնդիրներ սահմանելու և դրանք հետևողականորեն լուծելու կարողություններ, որի արդյունքում մասնագիտական խորհրդի դատին է հանձնվում կարևոր և արդյունավետ գիտական աշխատություն:

Ն. Ժամկոչյանի ատենախոսության վերաբերյալ իմ դրական կարծիքին զուգահեռ ներկայացնում եմ նաև մի քանի դիտողություններ:

1. Առաջին դիտողությունս վերաբերում է ատենախոսության մեջ օգտագործված հասկացություններին: Մասնավորապես, երբ ասում ենք «պետություն-եկեղեցի հարաբերություններ», ապա նախ՝ պետությունը և եկեղեցին, իրականում լինելով միասնական, ենթարկում ենք արհեստական տարանջատման, բացի այդ՝ «պետություն-եկեղեցի հարաբերություններ»-ի ներքո հասկացվում է հարաբերությունների ողջ շրջանակը՝ պետական և եկեղեցական բոլոր ինստիտուտներով, կենտրոնական և տեղական իշխանությունների մակարդակներով: Սակայն սույն ատենախոսության մեջ խոսքը նման բազմաշերտ հարաբերությունների մասին չէ, այլ ավելի շատ պետական և եկեղեցական իշխանությունների փոխընկալման և փոխազդեցության մասին: Պետք է հիշել, որ պետությունը շատ ընդարձակ հասկացություն է, այն ընդհանրական ընկալմամբ ներառում է նաև եկեղեցին (եկեղեցու պետությունից առանձին լինելը ավելի ուշ շրջանին վերաբերող և բոլորովին այլ իմաստ ունեցող իրողություն է): Ուստի «պետություն-եկեղեցի հարաբերություններ» հասկացությունը վերանայելի է: Ավելի ճիշտ կլիներ օգտագործել «աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերություններ» և կամ «պետական և եկեղեցական իշխանությունների փոխհարաբերություններ» արտահայտությունը:

Սակայն նշվածը զուտ տեսական դիտարկում է և որևէ կերպ չի նսեմացնում ատենախոսի կատարած աշխատանքը, քանի որ «պետություն-եկեղեցի հարաբերություններ» արտահայտությունը այնքան տարածված ու ընդունված է գիտական գրականության մեջ, որ այլ հասկացությունների տեղ համարյա չի թողնվել:

2. Առաջին գլխի երրորդ և չորրորդ ենթավերնագրերը համապատասխանաբար սկսվում են 1169 և 1166 թվականներից, ուստի ժամանակագրական հաջորդականության սկզբունքով դիտարկելիս ճիշտը այդ ենթագլուխների տեղերով փոփոխելը կլիներ:
3. Ատենախոսության երկրորդ գլխի վերնագրում ձևակերպման սխալ կա, վերնագրված է՝ «Պետության և եկեղեցու փոխհարաբերությունները Լևոն Բ-ի օրոք (1187-1198 թվականներ)», մինչդեռ Լևոն Բ-ի «օրոք»-ը միայն 1187-1198 թվականները չեն, այլ 1187-1219 թթ. ժամանակահատվածը, ուստի ճիշտ կլիներ ձևակերպել «Պետության և եկեղեցու փոխհարաբերությունները Լևոն Բ-ի իշխանության շրջանում (1187-1198 թվականներ)»:
4. Քանի որ ատենախոսության ժամանակագրությունն ընդգրկում է 1166-1226 թթ., ապա ակնկալելի էր, որ առաջին գլխի ենթավերնագրերից մեկը նվիրված կլիներ Թորոս Բ իշխանի (1145-1169 թթ.) օրոք Կիլիկիայում աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների միջև հարաբերությունների բնույթին ու բովանդակությանը, քանի որ իշխանի կառավարման և սույն ատենախոսության ժամանակագրական շրջանակներում համընկնում են առնվազն երեք տարի: Հեղինակը, ճիշտ է, դրան անդրադառնում է, սակայն համառոտ:
5. Հեղինակը երբեմն հստակ իմաստ ունեցող բառերը կիրառում է այլ իմաստով: Նա գրում է. «դա վկայում է նաև Գ. Միքայելյանը» (էջ 25), մինչդեռ Գ. Միքայելյանը 12-13-րդ դարերի մասին վկայել չէր կարող, և պատահական չէ, որ ատենախոսն ինքը շարունակում է՝ «ում (այսինքն՝ Գ. Միքայելյանի) տեսակետի համաձայն», այսինքն՝ խոսքը ոչ թե վկայության, այլ տեսակետի մասին է:

Նշված դիտողություններն էականորեն չեն ազդում ատենախոսության արժանիքների վրա: Դրանք ատենախոսին օգտակար կլինեն հետագա ուսումնասիրություններում:

Ն. Ժամկոչյանը կատարել է ուշագրավ աշխատանք, որտեղ ակնհայտ է բանիմաց դեկավարի խորհուրդը, իր՝ հեղինակի խոսքը և վերլուծական միտքը:

Ատենախոսությունը շարադրված է գրագետ հայերենով, հեղինակի հրատարակած հոդվածներն էլ արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

«Հայաստանի Հանրապետությունում Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 22-րդ կետի չորրորդ պարբերության համաձայն, ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հեղինակի հրատարակված աշխատանքները, ներկայացնում եմ հետևյալը.

1. հեղինակի տպագիր հոդվածները արտացոլում են գլուխների բովանդակությունը,
2. ատենախոսության թեման արդիական է,
3. ատենախոսության մեջ առկա դրույթներն և եզրահանգումները հեղինակային են, իսկ փոխառված մտքերն ու դիտարկումները՝ պարտադիր հղված,
4. ատենախոսության մեջ քննարկված թեմատիկան, ներկայացված դրույթներն ու եզրահանգումները նոր և հիմնավոր են:

Այսպիսով՝ Նելլի Գևորգի Ժամկոչյանի «Պետություն-եկեղեցի հարաբերությունները Կիլիկյան Հայաստանում 1166-1226 թվականներին» վերնագրով Թ.00.05 «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետին, զնահատվում է իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ նոր խնդրի առաջադրում:

Ասվածի հիմքով համարում եմ, որ Նելլի Գևորգի Ժամկոչյանն արժանի է իր հայցած՝ Թ.00.05 «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝



պ.գ.դ. Արման Սամվելի Եղիազարյան

Պ.գ.դ. Ա. Ս. Եղիազարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար, պ.գ.թ. Մ. Վ. Հովհաննիսյան

05.06.2025 թ.